ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 91

<02> 09 2014թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոփոխություն կատարելու մասին ՀՀ Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2014թ. սեպտ. 02
թիվ 91 որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 13

2014թ. օգոստոսի 29-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Ա. Արամյանը, Մ. Թադևոսյանը

Օրակարգ

<<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Լսեցին- <<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին- Ա. Պողոսյանը, Ա. Հակոբյանը, Ա. Արամյանը

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով, հիմք տրանսպորտային միջոցի գնահատման ամփոփ թերթիկ՝

Որոշեցին

<<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-32054 մակնիշի 2301Լ /119ԼԼ26/ պետհամարանիշի ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-32054 մակնիշի 138ԼԼ26 պետհամարանիշի ավտոբուսով:

Նախագահ Ա Մուրադյան /ստորագրություն/

Տեղակալ Ա.Պողոսյան /ստորագրություն/

Քարտուղար Ա.Հակոբյան /ստորագրություն/

Անդամներ Ա. Արամյան /ստորագրություն/

Մ. Թադևոսյան /ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 90

ք. Արտաշատ

„01„ 09 2014թ.

ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /ծածկագիր՝ 62-2.1-4/ Հասմիկ Գասպարյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 89

ք. Արտաշատ

«01» 09 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Դավթյանի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 68 որոշման հավելվածի 8-րդ տողում <<Խուդոյան Վանիկ>> բառերը փոխարինել <<Հարությունյան Ավետիք>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРАРАТСКИЙ МАРЗПЕТ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 88

Ք. Արտաշատ

«01» 09 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 134 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման 2014-2016 թվականների ռազմավարական և 2014 թվականի տարեկան ծրագրերը հաստատելու մասին>> թիվ 134 որոշման հավելվածներ 1-ը և 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2014 թվականի սեպտեմբերի 1-ի
N 88 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ 2014-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի առաջին տարի 2014

Ծրագրի վերջին տարի 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է ներքին աուդիտի գործունեության և զարգացման երեք տարվա պլանավորման փաստաթուղթ, որն ընդգրկում է 2014-2016 թվականները ընկած ժամանակահատվածը և ենթակա է վերանայման տարեկան առնվազն մեկ անգամ:

Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի հիման վրա մշակվում են ներքին աուդիտի տարեկան ծրագրերը:

Ներքին աուդիտի 2014-2016 թվականների ռազմավարական ծրագիրը կազմված է <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 974-Ն, 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանների համապատասխան:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներքին աուդիտն անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Ներքին աուդիտն աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու

կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Ներքին աուդիտի խնդիրն է կազմակերպության ղեկավարին հավաստիացնել, որ կազմակերպության ենթակա միավորների ղեկավարները, կազմակերպության բաժինների պետերը և առանձին բնագավառների մասնագետները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները: Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ կազմակերպության ղեկավարին հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ներքին աուդիտի 2014-2016 թվականների ռազմավարական ծրագիրը կազմված է ռիսկերի գնահատման հիման վրա:

Ռազմավարական ծրագրի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, մարզպետարանի աշխատակազմի բաժինների կողմից 2012 թվականին ներքին աուդիտի բաժնին ներկայացված ռիսկերի գնահատման տեղեկագրերը, ռիսկերի որոշման չափորոշիչները և 2013 թվականի-ին իրականացված աուդիտի առաջադրանքների արդյունքները:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում ներքին աուդիտն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը:

Ներքին աուդիտի բաժինը կազմված է 4 հաստիքային միավորից՝ բաժնի պետ և երեք գլխավոր մասնագետներ:

Ներքին աուդիտի աշխատանքային ռեսուրսների բավարար չլինելու դեպքում կամ նեղ մասնագիտական հարցերի գծով կարծիքի անհրաժեշտության ժամանակ ներքին աուդիտի աշխատանքներին կարող են ներգրավվել փորձագետներ կամ խորհրդատուներ՝ <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2014-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Միավոր	Տարի	Ժամ-կետ (օր)	Աուդիտի տեսակ	Ռիսկի խումբ
Աբովյանի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Ազատավանի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Այգեպատի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Այնթապի թիվ 1 միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արմաշի ԱԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արարատի թիվ 4 հիմն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արբաթի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արևաբույրի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արտաշատի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Արտաշատի թիվ 5 հիմն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Գեղանիստի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Ցածր
Գետազատի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Վարդաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 1-ին եռամսյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 2-րդ եռամսյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 3-րդ եռամսյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 4-րդ եռամսյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 1-ին կիսամյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 2-րդ կիսամյակ	2014	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Դալարի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Դարակերտի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Դվինի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Հովտաշատի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Մասիսի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Մարմարաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Մրգավանի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Մրգավետի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Նոյակերտի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նոր Խարբերդի թիվ 1 միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նոր Խարբերդի թիվ 2 միջն. դպ.ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նոր Կյուրինի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Ոսկետափի հիմն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Ուստանի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Ջրահովիտի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Ջրաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Ջրաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Սայաթ Նովայի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին

Սայաթ-Նովայի ԱԱՊԿ ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Վ. Արտաշատի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Վանաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Տափերականի Բ/Ա ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Փ. Վեդու միջն. դպ. ՊՈԱԿ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Այգավանի Բ/Ա ՓԲԸ	2014	5	Ֆինանսական աուդիտ	Ցածր
Ազատավանի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	2015	10	Կատարողականի աուդիտ	Ցածր
Ավշարի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արարատի (գ) թիվ 1 միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արարատի (գ) թիվ 2 միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արարատի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արարատի թիվ 3 հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արաքսավանի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արտաշատի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Արտաշատի թիվ 4 հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արտաշատի թիվ 5 հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Բյուրավանի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Բուրաստանի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 1-ին եռամսյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 2-րդ եռամսյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 3-րդ եռամսյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 4-րդ եռամսյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 1-ին կիսամյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 2-րդ կիսամյակ	2015	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր
Դալարի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Դիմիտրովի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Լանջազատի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նանաչուտի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Կրթության բաժին	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Հաշվապահական հաշվառման բաժին	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Հովտաշատի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Հովտաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Ճարտարապետաշինարարական բաժին	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Մասիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Մարմարաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Մխչյանի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նարեկի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նշավանի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նորամարգի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Նորաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին

Շահումյանի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Ոսկետափի հիմն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Սոցիալական ապահովության բաժին	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Վ. Դվինի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Գետազատի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Վեդու սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	2015	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Տափերականի Բ/Ա ՓԲԸ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Քաղցրաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	2015	5	Ֆինանսական աուդիտ	Ցածր
Ազատաշենի հիմն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արտաշատի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն	2016	10	Կատարողականի աուդիտ	Զգայուն
Այգեզարդի ԱԱՊԿ ՓԲԸ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Ցածր
Այնթապի թիվ 2 միջն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արարատի Բ/Ա ՓԲԸ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Զգայուն
Արալեզի միջն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արմաշի միջն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
Արտաշատի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Արտաշատի թիվ 5 հիմն. դպ. ՊՈԱԿ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Բարձր
Գեղանիստի ԱԱՊԿ ՓԲԸ	2016	5	Ֆինանսական աուդիտ	Միջին
ինանսատնտեսագիտական բաժին	2016	10	Կատարողականի աուդիտ	Միջին
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 1-ին եռամսյակ	2016	5	Համապատասխանության աուդիտ	Բարձր

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մարգարյան

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2014 թվականի սեպտեմբերի 1-ի
N88 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մշակում և կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացնում առաջիկա տարում կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԴԵՐԸ և ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարեկան ծրագիրը սահմանում է տվյալ տարվա ընթացքում կազմակերպությունում իրականացվող առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ և ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և վավերացվում կազմակերպության ղեկավարի կողմից:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ա. շարունակական մասնագիտական վերապատրաստում,

բ. ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցությունը,

գ. ներքին աուդիտի մասին սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը,

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության ընթացքում առաջադրանքների իրականացումը պահանջում է կարգավորված մոտեցում, ինչը ենթադրում է առաջադրանքով սահմանված նպատակների իրագործման որոշակի քայլերի հաջորդականություն կամ մեթոդ՝ համաձայն ստանդարտների:

Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերը հիմնված են համակարգային մոտեցման վրա: Համակարգային մոտեցման հիմքը ներքին հսկողական համակարգի ուսումնասիրությունն է:

Ելնելով կազմակերպության տեսակից, կիրառվող գործընթացներից և մեթոդներից՝ առաջադրանքները կարող են լինել տարբեր, ուստի միշտ կարող է առաջանալ աշխատանքային փաստաթղթերի օրինակների ձևափոխությունների անհրաժեշտություն: Որոշ դեպքերում, կարող են անհրաժեշտ լինել նաև լրացուցիչ փաստաթղթեր:

Ներքին աուդիտի ստորաբաժանումը աուդիտորական առաջադրանքի նպատակների իրագործման համար այն իրականացնում է ներքոնշյալ փուլերով:

1) Առաջին փուլ-առաջադրանքի պլանավորում,

2) Երկրորդ փուլ-առաջադրանքի իրականացում,

3) Երրորդ փուլ-հաշվետվությունների պատրաստում,

4) Չորրորդ փուլ-վերստուգման գործընթաց՝ հայտնաբերված թերացումների վերացման մասին տեղեկատվության ստացում (հետադարձ կապ), ստացված տեղեկատվության վերլուծություն, ռիսկերի գնահատում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Հաշվետվությունների միջոցով ներքին աուդիտորները պետք է փոխանցեն իրենց աշխատանքի որակը, նպաստեն կազմակերպությունում դրական փոփոխությունների իրականացմանը:

Առաջադրանքի կատարման վերջում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է կազմակերպության ղեկավարությանը տեղեկացնի աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Միավոր	Աուդիտի տեսակ	Պլան. օրերի քանակ	Սկզբի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ
Աբովյանի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Ազատավանի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Այգեպատի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Այնթապի թիվ 1 միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Արմաշի ԱԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	01.09.2014	26.12.2014
Արարատի թիվ 4 հիմն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Արբաթի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Արևաբույրի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Արտաշատի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Արտաշատի թիվ 5 հիմն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Գեղանիստի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	01.09.2014	26.12.2014
Վարդաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	01.09.2014	26.12.2014
Գետզատի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 1-ին եռամսյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 2-րդ եռամսյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 3-րդ եռամսյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների ընթացակարգերի աուդիտ՝ 4-րդ եռամսյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 1-ին կիսամյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Գնումների պայմանագրերի աուդիտ՝ 2-րդ կիսամյակ	Համապատասխանության աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Դալարի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Դարակերտի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Դվինի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Հովտաշատի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Մասիսի թիվ 2 հիմն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Մարմարաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Մրգավանի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Մրգավետի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014

Նոյակերտի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Նոր Խարբերդի թիվ 1 միջն. դպ.ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Նոր Խարբերդի թիվ 2 միջն. դպ.ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Նոր Կյուրինի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Ոսկետափի հիմն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Ոստանի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Ջրահովիտի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Ջրաշենի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Ջրաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Սայաթ-Նովայի ԱԱՊԿ ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	11.07.2014	26.12.2014
Սայաթ-Նովայի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.03.2014	26.12.2014
Վ. Արտաշատի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Վանաշենի միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Տափերականի Բ/Ա ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Փ. Վեդու միջն. դպ. ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ	5	08.01.2014	26.12.2014
Այգավանի Բ/Ա ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ	5	01.09.2014	26.12.2014

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մարգարյան